ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ - ՀԱՅԱՍՏԱՆ

CENTER FOR REGIONAL DEVELOPMENT
TRANSPARENCY INTERNATIONAL ARMENIA

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# ANNUAL REPORT

# 2006

www.transparency.am

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ Ինթերնեշնլի Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռնության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության թիվ 111-A-00-04-00056-00 համագործակցության պայմանագրի շրջանակներում: Սույնի բովանդակության պատասխանատուն «Տարածաշրջանային զարգացման կենտրոն/ Թրանսփարենսի Ինթերնեշնլ - Հայաստան» հասարակական կազմակերպությունն է, և պարտադիր չէ, որ այն համընկնի Քաունթերփարթ Ինթերնեշնլի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Միացյալ Նահանգների կառավարության տեսակետների հետ:

This publication was made possible by the support of Counterpart International's Civic Advocacy Support Program (CASP), and the generous support of the American people through the United States Agency for International Development (USAID) under Cooperative Agreement No. 111-A-00-04-00056-00. Content expressed herein is the responsibility of the Center for Regional Development/ Transparency International Armenia NGO, and does not necessarily reflect the views of Counterpart International, USAID and the United States Government.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության մասին 4
Ծրագրեր 6
Այլ գործունեություն 16
Կոնֆերանսներ 22
Ֆինանսական տվյալներ 24
Դոնորներ 26
Գործընկերներ 26
Խորհրդի անդամներ 28
Աշխատակազմ 28

# TABLE OF CONTENTS

About the Organization 5
Projects 7
Other Activities 17
Conferences 23
Financial Data 25
Donors 27
Partners 27
Board Members 29
Staff 29

# ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Տարածաշրջանային զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2000թ. հուլիսին: 2001թ. հոկտեմբերից այն հավատարմագրվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (ԹԻ) համաշխարհային հակակոռուպցիոն շարժման կողմից` ներկայացնելու այդ շարժումը Հայաստանում: 2006թ. կազմակերպությունը վերագրանցվել է որպես «Տարածաշրջանային զարգացման կենտրոն / Թրանսփարենսի Ինթերնեշնլ - Հայաստան» հասարակական կազմակերպություն (ՏԶԿ/ԹԻ-Հայաստան) և վերահավատարմագրվել ԹԻ կողմից 2006թ. օգոստոսին:

ՏԶԿ/ԹԻ-Հայաստանի առաքելությունն է նպաստել արդյունավետ հանրային քաղաքականությանը և կառավարմանը` կանխարգելելու կոռուպցիան և ամրապնդելու ժողովրդավարությունը Հայաստանում ու տարածաշրջանում: Կազմակերպության գործունեությունը նպատակաուղղված է խթանելու թափանցիկությունը, հաշվետվողականությունը և հանրային մասնակցությունը, աջակցելու քաղաքական, տնտեսական ու սոցիալական բարեփոխումների համար բարենպաստ մթնոլորտի ստեղծմանը և այլն:

Իր նպատակներին հասնելու համար կազմակերպությունն իրականացնում է Հայաստանում և տարածաշրջանում ընթացող քաղաքական, տնտեսական ու սոցիալական բարեփոխումների գործընթացների ընդգրկուն ուսումնասիրություններ, հանրային քաղաքականության բարեփոխումների մոնիտորինգ և գնահատում, հանրային քաղաքականության արդյունավետությանն ուղղված շահերի պաշտպանություն ու լոբբինգ, հանրային քաղաքականության և կառավարման գործընթացների վերաբերյալ հանրային իրազեկման քարոզարշավների կազմակերպում ու անցկացում և հանրային քաղաքականության ու կառավարման գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցության համար անհրաժեշտ կարողությունների զարգացում:

| | |
|---|---|
| Փետրվար | Վերագրանցում ՏԶԿ/ԹԻ-Հայաստան անվանումով |
| Հուլիս | Անդամների ընդհանուր ժողովի կողմից նոր Խորհրդի ընտրություն |
| Հուլիս | Վարքագծի վերանայված կանոնների հաստատում |
| Օգոստոս | Վերահավատարմագրում որպես ԹԻ հայաստանյան մասնաճյուղ |
| Նոյեմբեր | 2007-2010թթ. ռազմավարական ծրագրի հաստատում |



# ABOUT THE ORGANIZATION



The Center for Regional Development is a non-governmental organization established in July 2000. As of October 2001, it bears the status of accredited National Chapter of Transparency International (TI), the global anti-corruption movement. In 2006, the organization was re-registered as the Center for Regional Development/ Transparency International Armenia NGO (CRD/TI Armenia) and re-accredited by TI in August 2006.

CRD/TI Armenia's mission is to promote effective public policy and good governance in order to prevent corruption and strengthen democracy in Armenia and the region. Its activities are aimed at fostering transparency, accountability and participation, promoting an enabling environment for political, economic and social reforms, etc.

The organization strives to accomplish its goals through conducting comprehensive research on the process of political, economic and social reforms in Armenia and the region, carrying out monitoring and evaluation of policy reforms, advocating and lobbying for policy changes to ensure the effectiveness of reforms, launching public awareness campaigns on the public policy and governance processes, and building civil society's capacity to participate in policy-making and governance matters.

| | |
|---|---|
| February | Re-registered as CRD/TI Armenia |
| July | New Board elected by the General Meeting of members |
| July | Approved the revised Code of Conduct |
| August | Re-accredited as TI National Chapter |
| November | Adopted Strategic Plan for 2007-2010 |

## Ուսումնասիրություն և շահերի պաշտպանություն՝ խթանելու հակակոռուպցիոն քաղաքականությունը

«Առավել արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության խթանումը Հայաստանում» ծրագիրը նպատակաուղղված է առավել արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության իրականացմանն աջակցելուն: Դրա նպատակը նշված քաղաքականության համապատասխանեցումն է միջազգային չափանիշներին և կանխարգելիչ միջոցառումներից բացի կոռուպցիայի բացահայտմանն ու դատապարտմանը և հանրային աջակցությանն առնչվող միջոցառումների ընդգրկումը: Ծրագրի շրջանակներում ծավալված շահերի պաշտպանության գործողությունները հասցեագրված են եղել ինչպես որոշում ընդունողներին, այնպես էլ հանրությանը՝ բարձրացնելու վերջինիս իրազեկությունը հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման վերաբերյալ:

ՏԶԿ/ԹԻ-Հայաստանի կողմից կատարված ուսումնասիրությունը ներառել է հանրապետության 1,500 տնային տնտեսությունների հեռախոսային հարցում, հարցազրույցներ 25 փորձագետների ու պետական պաշտոնյաների հետ և գործարարների, լրագրողների, հասարակական կազմակերպությունների ու պետական պաշտոնյաների ֆոկուսխմբային քննարկումներ: Ուսումնասիրությանը հաջորդել է հակակոռուպցիոն քաղաքականության վերլուծությունը և դրա վերանայմանն ուղղված առաջարկությունների մշակումը, որոնք ամփոփվել են հրապարակման մեջ և ներկայացվել շահագրգիռ կողմերին 2006թ. հոկտեմբերին: Պատրաստվել է հակակոռուպցիոն քաղաքականության՝ կանխարգելող, բացահայտող և հանրային աջակցության բաղադրիչների քարոզչությանն ուղղված սոցիալական գովազդ, որը հեռարձակվել է 3 համապետական հեռուստաալիքներով: Ծրագիրն ապահովել է ինտերնետային կայքի գործունեությունը, որը պարունակել է առօրյա հակակոռուպցիոն լուրեր և 12 տպագիր լրատվամիջոցների կողմից կոռուպցիոն թեմաների լուսաբանման ամփոփում:

ՏԶԿ/ԹԻ-Հայաստանը շարունակելու է շահերի պաշտպանությանն ուղղված ջանքերը 2007թ. ընթացքում՝ ապահովելու իր առաջարկությունների ներառումը վերանայվող Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի և դրա իրականացման միջոցառումների պլանում:

| | |
|---|---|
| Ժամկետ՝ | հուլիս 2005 – օգոստոս 2007 |
| Բյուջե՝ | 30,000,000.00 ՀՀ դրամ |
| Դոնոր՝ | Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագիր / Քաունթերփարթ Ինթերնեշնլ հայաստանյան ներկայացուցչություն / ԱՄՆ ՄԶԳ |



## Research and Advocacy to Promote Anti-Corruption Policy

Project "Towards More Effective Anti-Corruption Policy in Armenia" aimed at contributing to a more effective anti-corruption policy implementation. Its aim is to make the policy compliant to international standards and include detection and public support measures, along with the existing preventive ones. Advocacy efforts of the project were targeted at the decision makers as well as the general public to raise the latter's awareness on the anti-corruption policy implementation.

Research conducted by CRD/TI Armenia included a phone survey of 1,500 households in Yerevan, interviews with 25 experts and government officials and focus group discussions with businesses, journalists, NGOs and government officials. Research was followed by analysis of the anti-corruption policy and development of recommendations on its revision, summarized in a publication and presented at the stakeholders' workshop in October 2006. Anti-corruption social ads with a focus on preventive, detection and public support elements of an effective anti-corruption policy were produced and broadcast via 3 television channels throughout Armenia. The project maintained the website with daily anti-corruption news and a summary covering 12 print media outlets on corruption-related matters.

CRD/TI Armenia will continue its advocacy efforts throughout 2007 to ensure incorporation of its recommendations to the country's Anti-corruption Strategy and its Implementation Plan.

| | |
|---|---|
| Period: | July 2005 – August 2007 |
| Budget: | 30,000,000.00 AMD |
| Donor: | Civic Advocacy Support Program /Counterpart International/ USAID |

### Ուսումնասիրություն՝ բացահայտելու հասարակության ընկալումը կոռուպցիայի վերաբերյալ

«2006թ. հասարակական կարծիքի ուսումնասիրություն «Կոռուպցիայի ընկալումը Հայաստանում»» ծրագրի նպատակն էր մարդկանց հնարավորություն ընձեռել արտահայտելու կոռուպցիայի վերաբերյալ իրենց կարծիքը, առանձնացնելու առավել խնդրահարույց ոլորտները, վերհանելու կոռուպցիոն դրսևորումներն ու բացահայտելու կոռուպցիայի նվազեցմանն ուղղված հնարավոր լուծումները:

Հարցման մեթոդաբանությունը մշակվել է՝ հիմք ընդունելով ՏԶԿ-ի կողմից կոռուպցիայի ընկալման վերաբերյալ 2002թ. ուսումնասիրությունը՝ 2006 և 2002 թվականների սոցիոլոգիական հարցումների տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով: 2006թ. ներկայացուցչական ընտրանքը կազմել են պատահականորեն ընտրված 1,500 տնային տնտեսություններ Հայաստանի մարզերում և Երևան քաղաքում: Ընտրանքը համամասնորեն բաշխվել է 31 քաղաքային և 40 գյուղական բնակավայրերի միջև, ներառելով սեռա-տարիքային, կրթական, եկամտի և զբաղմունքների խմբերի հարցվողներին:

Ուսումնասիրության արդյունքների հրապարակումը լայնորեն տարածվելու է և բաշխվելու պետական պաշտոնյաներին, գործարարներին, քաղաքացիական հասարակությունը ներկայացնող փորձագետներին, միջազգային կազմակերպություններին և լրագրողներին, որոնք կարող են ներդրում ունենալ Հայաստանում առավել արդյունավետ քաղաքականության ձևավորման գործում:

| | |
|---|---|
| Ժամկետ՝ | հուլիս 2006 – փետրվար 2007 |
| Բյուջե՝ | 22,025,568.11 ՀՀ դրամ |
| Դոնոր՝ | ՄԱԿ-ի զարգացման ծրագրի գրասենյակ Հայաստանում |

### Research to Reveal Public Perception on Corruption

Project "2006 Countrywide Survey on Public Perception on Corruption in Armenia" was designed to give people a voice for sharing their thoughts on corruption, specify problematic areas, reveal manifestations of corruption, and identify possible solutions to combat corruption.

Survey methodology was based on CRD's 2002 country corruption survey to ensure an appropriate comparison with the previous data. The 2006 representative sample of 1,500 randomly selected households covered all provinces (marzes) of Armenia, along with Yerevan City. The sample was proportionally distributed over 31 urban and 40 rural settlements, involving respondents of all gender, age, education, income and occupation groups.

The publication of the survey results will be distributed widely and introduced to state officials, businesses, civil society experts, international organizations and journalists, who can provide input to the development of more effective anti-corruption policy in Armenia.

| | |
|---|---|
| Period: | July 2006 – February 2007 |
| Budget: | 22,025,568.11 AMD |
| Donor: | UN Development Programme Office in Armenia |

## Ուսումնասիրություն՝ գնահատելու ծառայությունների որակը գյուղատնտեսության ոլորտում

«Գյուղական ձեռնարկատիրության և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության գնահատում» ծրագիրն անդրադարձել է գյուղատնտեսության ոլորտի իրավիճակին՝ մշակելու առաջարկություններ Գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) և Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի (ՓՄՁ ԶԱԿ) մասնաճյուղերի ծառայությունների որակը բարելավելու ուղղությամբ և դրանով նպաստելու գյուղական բնակչության բարեկեցությանը:

Ծրագիրն անդրադարձել է նշված հաստատությունների և դրանց կողմից տրամադրվող ծառայությունների սպառողների, ինչպես նաև՝ գյուղական բնակչության ու տեղական ինքնակառավարման մարմինների միջև հաղորդակցությանը: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են համապատասխան օրենսդրությունն ու գրականությունը և կատարվել է սոցիոլոգիական ուսումնասիրություն: Հարցում է իրականացվել Շիրակի, Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի 20 գյուղերի 400 տնային տնտեսությունների շրջանում: Հարցազրույցների և խմբային քննարկումների միջոցով կատարվող մասնակցային գնահատումն ընդգրկել է ԳԱՄԿ-երի և ՓՄՁ ԶԱԿ-երի ղեկավարներին:

Գնահատման արդյունքները նախատեսվել են օգտագործվելու տարբեր շահագրգիռ կողմերի միջև հաղորդակցության արդյունավետության բարձրացման և ծառայությունների որակի բարելավման ուղղությամբ առաջարկությունների մշակման նպատակով:

| | |
|---|---|
| Ժամկետ՝ | դեկտեմբեր 2005 – ապրիլ 2006 |
| Բյուջե՝ | 12,446,000.00 ՀՀ դրամ |
| Դոնոր՝ | Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակ |





## Research to Assess the Quality of Services in the Field of Agriculture

Project "Armenia Rural Enterprise and Small Scale Agriculture Assessment" targeted the situation in the agricultural sector to develop recommendations for improvement of service delivery by the Regional Agriculture Support Centers (RASC) and divisions of the Small and Medium Enterprise Development National Center (SMEDNC) to enhance livelihood of the rural population.

The project focused on the communication between the mentioned institutions and users of their services as well as that between the rural population and local government bodies. It included review of the relevant legislation and literature as well as social research. A survey of 400 households was conducted in 20 villages of Shirak, Tavush, Aragatsotn, Gegharquniq and Syuniq marzes of Armenia. Participatory assessment through interviews and group discussions engaged the heads of RASC and SMEDC.

Assessment results were meant to provide a basis for making recommendations on how to promote the effectiveness of communication among various stakeholders and improve the quality of the service delivery.

| | |
|---|---|
| Period: | December 2005 – April 2006 |
| Budget: | 12,446,000.00 AMD |
| Donor: | The World Bank Office Yerevan |

## Մոնիտորինգ՝ բարելավելու ԱՀՌԾ իրականացումը

«ՀՀ Շիրակի մարզի հանրակրթության ոլորտում Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով (ԱՀՌԾ) նախատեսված միջոցառումների և դոնորական ծրագրերի մոնիտորինգ» ծրագրի նպատակն էր նպաստել Հայաստանում աղքատության նվազեցմանը՝ խթանելով հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունավետությունը:

Ծրագրի շրջանակներում կիրառվել են մարզային մակարդակով հասարակական մոնիտորինգի տարբեր մեթոդներ (ֆոկուսխմբային քննարկումներ, հարցումներ, խորացված հարցազրույցներ և այլն): Մոնիտորինգի են ենթարկվել Հայաստանի կառավարության կողմից հաստատված ԱՀՌԾ կրթության ոլորտի նպատակային և գործնային ցուցանիշները և միջոցառումների իրականացման ընթացքը:

2006թ. գարնանը ծրագրի շրջանակներում կազմակերպվել են ֆոկուսխմբային քննարկումներ՝ վեր հանելու հանրակրթության որակի վրա ազդող գործոնները: Քննարկումներին մասնակցել են մոտ 220 մարդ՝ Շիրակի մարզի 36 դպրոցների (8 քաղաքային և 28 գյուղական) տնօրեններ, ուսուցիչներ և այդ դպրոցներում սովորող աշակերտների ծնողներ:

Աշնանն անցկացվել են խորացված հարցազրույցներ վերը նշված դպրոցների տնօրենների հետ՝ հավաքագրելու տվյալներ ԱՀՌԾ-ով սահմանված կրթության մոնիտորինգային ցուցանիշների և միջոցառումների իրականացման վերաբերյալ, ինչպես նաև՝ ստանալու նրանց առաջարկները վերանայվող ԱՀՌԾ փաստաթղթում կրթության բաժնի կատարելագործման ուղղությամբ:

Մոնիտորինգի արդյունքները վերլուծվելու, հրապարակվելու և ներկայացվելու են շահագրգիռ կողմերին 2007թ. ընթացքում: Ծրագրի շնորհիվ ակնկալվում է բարձրացնել հանրակրթության ոլորտի պատասխանատու պետական մարմինների թափանցիկության և պատասխանատվության մակարդակը, ինչպես նաև՝ ԱՀՌԾ նպատակների, խնդիրների և միջոցառումների իրականացման գործընթացի վերաբերյալ Շիրակի մարզի շահառուների իրազեկությունը:

| | |
|---|---|
| Ժամկետ՝ | դեկտեմբեր 2004 – օգոստոս 2007 |
| Բյուջե՝ | 52,971,011.00 ՀՀ դրամ |
| Դոնոր՝ | Օքսֆամ Մեծ Բրիտանիա հայաստանյան գրասենյակ, Օքսֆամ Նիդեռլանդներ (Նովիբ) |





## Monitoring to Improve Implementation of PRSP

Project "Monitoring of the Implementation of Poverty Reduction Strategy Program (PRSP) and Donor Assistance Programs in Secondary Education in Shirak Marz of Armenia" was designed to contribute to the reduction of poverty in Armenia through fostering effectiveness of reforms in the field of secondary education.

The project utilized various methodologies of public monitoring at a marz level (focus group discussions, surveys, in-depth interviews, etc.). Monitoring was conducted for outcome and output indicators of the PRSP approved by the Government of Armenia as well as for the process of implementation of measures.

In spring 2006, the project held focus group discussions to reveal factors that affect the quality of secondary education. Participants included 220 people from 36 settlements (8 urban and 28 rural) in Shirak marz - school principals, teachers and parents of students.

In fall the project conducted in-depth interviews with school principals to collect data on the monitoring indicators set forth by PRSP and implementation of measures, as well as to receive their suggestions on improvement of the education section within the PRSP document, which is in process of being revised.

Monitoring results will be analyzed, published and presented to the stakeholders in 2007. It is anticipated that project outcomes include increased transparency and accountability of state entities responsible for secondary education as well as the increased awareness of the Shirak marz stakeholders on the purpose, objectives and implementation of activities of PRSP.

| | |
|---|---|
| Period: | December 2004 – August 2007 |
| Budget: | 52,971,011.00 AMD |
| Donor: | Oxfam Great Britain Armenian Branch Office, Oxfam Netherlands (Novib) |

## Մոնիտորինգ՝ բարձրացնելու ընտրական գործընթացների և գնումների թափանցիկությունը

«2007թ. խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի ֆինանսավորման և «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի գնումների կանոնակարգերի ու գործընթացների թափանցիկություն» ծրագիրն անդրադարձել է 2007թ. առավել կարևոր երկու իրադարձություններին՝ խորհրդարանական ընտրությունների և «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի իրականացմանը:

Առաջին բաղադրիչի՝ խորհրդարանական ընտրությունների մոնիտորինգի առարկան նախընտրական քարոզարշավի ընթացքում կուսակցությունների ֆինանսական հոսքերի (եկամուտների ու ծախսերի) և վարչական ռեսուրսի օգտագործումն է: Մեթոդաբանությունը ներառում է իրավական դաշտի ուսումնասիրություն և երկրում քաղաքական իրավիճակի վերլուծություն, լրատվամիջոցների՝ ընտրական թեմաներով նյութերի մոնիտորինգ, կուսակցությունների քարոզարշավային ծախսերի գնահատում:

Երկրորդ բաղադրիչի՝ գնումների մոնիտորինգի առարկան «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի համապատասխան գործառույթների մոնիտորինգն է, ինչպես նաև՝ երկրում առկա գնումների գործընթացներն ընդհանուր առմամբ:

Ծրագիրը կնպաստի ընտրական և գնումների գործընթացների թափանցիկության վերաբերյալ շահագրգիռ կողմերի իրազեկության բարձրացմանը և օրենսդրության, ընթացակարգերի ու իրավակիրարկման մեխանիզմների բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակմանը:

Ժամկետ՝ նոյեմբեր 2006 – հուլիս 2007

Բյուջե՝ 32,573,456.86 ՀՀ դրամ

Դոնոր՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ





## Monitoring to Increase Transparency in Election Processes and Procurement

Project "Transparency of Regulations and Processes in 2007 Parliamentary Election Campaign Finance and MCA-Armenia Public Procurement" targeted two major affairs to take place in 2007 - the parliamentary elections and Millennium Challenge Account (MCA) - Armenia program.

The first component - the monitoring of parliamentary elections campaign - focused on the financial flows – revenues and expenditures of political parties and the use of administrative resource. The methodology included legal review and assessment of the political situation in the country, scrutinization of media coverage for election-related news and estimation of campaign costs.

The second component - monitoring of public procurement - concentrated on the respective operations of MCA-Armenia as well as on practices at national level.

The project will result in raised awareness of stakeholders on the transparency of electoral and public procurement processes and development of recommendations for improvement of legislation, procedures and enforcement.

Period: November 2006 – July 2007

Budget: 32,573,456.86 AMD

Donor: Open Society Institute Assistance Foundation – Armenia

## Շահերի պաշտպանություն՝ բարձրացնելու հանրային իրազեկությունը կոռուպցիայի վերաբերյալ

ՏՁԿ/ԹԻ-Հայաստանի ներկայացուցիչները շարունակել են իրենց գործունեությունը՝ բարձրացնելու քաղաքացիների իրազեկությունը կառավարման ու կոռուպցիային առնչվող հարցերի վերաբերյալ: 2006թ. ընթացքում նրանք մասնակցել են հեռուստատեսային բանավեճերի, կարդացել դասախոսություններ և ունեցել ելույթներ բազմաթիվ կազմակերպությունների, այդ թվում՝ Համաշխարհային բանկի, «Ֆրիդոմ Հաուս»-ի, Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղի, «Դեպի Հայք»-ի, Երևանի մամուլի ակումբի հրավերով:

Բացի այդ, տարին նշանավոր է եղել արտասահմանյան երկրների կառավարությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներով և քննարկումներով, ներառյալ՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունները, Եվրոմիության պատվիրակությունը, Համաշխարհային բանկը, ՆԱՏՕ-ն, ԵԱՀԿ ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների գրասենյակը, «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիան և այլն:

«Ֆրիդոմ Հաուս» կազմակերպության «2006թ. Անցումային շրջանի պետություններ» հրապարակումն ու ԱՄՆ դեսպանատան «Հայաստանում մարդու իրավունքների մասին զեկույցը» մեջբերում են կատարել ՏՁԿ/ԹԻ-Հայաստանի ուսումնասիրություններից: Կազմակերպության փորձագետները մշակել են Երևանի մամուլի ակումբի կողմից 2007թ. հրապարակվելիք «Հայաստանում ժողովրդավարական գործընթացների մոնիտորինգի 2006թ. զեկույցի»՝ կոռուպցիայի վերահսկման բաժինը:

## Շահերի պաշտպանություն՝ երաշխավորելու ժողովրդավարության արժեքները

2006թ. ՏՁԿ/ԹԻ-Հայաստանը, այլ ՀԿ-ների հետ համագործակցությամբ, շարունակել է շահերի պաշտպանությունն ու լոբբինգը ընդդեմ «Լոբբիստական գործունեության մասին» օրինագծի որոշ դրույթների, որոնք վտանգ են ներկայացնում որոշումների կայացման գործընթացում հասարակության մասնակցության առումով:

Կազմակերպությունը մասնակցել է նամակների քարոզարշավին՝ ուղղված համապատասխան պետական կառույցներին և ունեցել հանդիպումներ ՀՀ արդարադատության նախարարության և նախագահի աշխատակազմի պաշտոնյաների հետ: Շահերի պաշտպանությանն ուղղված՝ ՀԿ-ների ջանքերը հանգեցրել են Ազգային ժողովում օրինագծի ընդունման գործընթացի սառեցմանը:

## Advocacy to Raise Public Awareness on Corruption Issues

CRD/TI Armenia representatives continued activities towards raising awareness of citizens on governance and corruption matters. Throughout 2006, they participated in televised debates, held lectures and presentations for various organizations including the World Bank, Freedom House, Open Society Institute Assistance Foundation - Armenia, Birthright Armenia, Yerevan Press Club, etc.

In addition, the year was marked with meetings and discussions with representatives of foreign governments and international organizations, including the US, British and French Governments, EC Delegation, the World Bank, NATO, OSCE Office for Democratic Institutions and Human Rights, Millennium Challenge Corporation, etc.

Freedom House "Nations in Transit 2006" publication and US Embassy "Human Rights Report on Armenia" quoted CRD/TI Armenia studies. The organization's experts developed the chapter on corruption control of the "2006 Report on Monitoring of Democratic Developments in Armenia", which is to be published by Yerevan Press Club in 2007.

## Advocacy to Safeguard Democratic Values

In 2006, CRD/TI Armenia, in cooperation with other NGOs, continued advocacy and lobbying against certain provisions of the Draft Law on Lobbying, which could threaten participation of NGOs in decision-making.

The organization participated in the letter campaign addressed to respective state institutions and held meetings with responsible officers at the Ministry of Justice and President's Office. Advocacy efforts of NGOs resulted in freezing the passage of the Draft Law on Lobbying in the National Assembly.

## Քաղաքացիական հասարակության ներդրում՝ բարելավելու երկրի վերաբերյալ զեկույցի որակը

ՏՁԿ/Թի-Հայաստանը ներկայացրել է դիտողություններ երկրի առաջընթացի վերաբերյալ զեկույցի շուրջ, որը պատրաստվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անցումային պետությունների հակակոռուպցիոն ցանցի (ՀԿՑ) փորձագետների կողմից: Զեկույցը վերաբերել է ՏՀԶԿ փորձագետների 24 առաջարկությունների իրականացման վերաբերյալ Հայաստանի կառավարության ներկայացրած հաշվետվությանը:

2006թ. սեպտեմբերին կազմակերպությունն աջակցել է ՏՀԶԿ/ՀԿՑ-ին՝ կազմակերպելու քննարկում Հայաստանի հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: Միջոցառումը վեր է հանել կոռուպցիային առնչվող խնդիրները ՀԿ-ների փորձագիտական ոլորտներում և ընդգծել իրավակիրարկման խթանման անհրաժեշտությունը՝ ի հակադրություն միայն օրենսդրական բարեփոխումների:

## Բողոքարկման լծակների կիրառում՝ խթանելու Հայաստանի կողմից իր միջազգային պարտավորությունների կատարումը

2006թ. ապրիլին ՏՁԿ/Թի-Հայաստանը ստացել է ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացում հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի (Օրհուսի կոնվենցիայի) համապատասխանության կոմիտեի պատասխանը 2004թ. սեպտեմբերին ներկայացված հաղորդագրությանը: Վերջինս պատրաստվել էր ՏՁԿ/Թի-Հայաստանի և գործընկեր կազմակերպությունների կողմից և վերաբերել՝ Հայաստանի կառավարության կողմից Օրհուսի կոնվենցիայի շրջանակներում ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման անհամապատասխանությանը Երևանում Դալմայի այգիների կառուցապատման հարցում:

Համապատասխանության կոմիտեն հաստատել է երկրի անհամապատասխանությունը կոնվենցիայի շրջանակներում իր ստանձնած պարտավորություններին և ներկայացրել առաջարկություններ՝ ապահովելու դրանց իրականացումը, ներառյալ՝ կոնկրետ քայլեր, որ պետք է կատարվեն մինչև 2008թ.: ՏՁԿ/Թի-Հայաստանը և գործընկերները կազմակերպել են մի շարք միջոցառումներ, ինչպես օրինակ՝ շահագրգիռ կողմերի քննարկում, մամուլի ասուլիս և Համապատասխանության կոմիտեի փորձագիտական եզրակացության տարածում, ինչի արդյունքում ՀՀ վարչապետը հանձնարարել է ձևավորել միջգերատեսչական հանձնաժողով՝ մշակելու առաջարկություններ երկրի կատարողականը բարելավելու ուղղությամբ:





## Providing Civil Society Input to Improve the Quality of the Country Report

CRD/TI Armenia provided comments to the country's progress report developed by the Anti-Corruption Network for transition economies (ACN) of the Organization for Economic Cooperation and Development (OECD) regarding the implementation of twenty four OECD expert recommendations as presented by the Armenian Government.

In September 2006, the organization assisted the OECD/ACN in holding a discussion with local NGOs. The event revealed corruption-related problems in specific areas of the NGOs expertise and highlighted the importance of promotion of law enforcement

## Use of Complaint Mechanisms to Promote Armenia's Compliance with Its International Obligations

In April 2006, CRD/TI Armenia received a response from the Compliance Committee of the UN Economic Commission for Europe Convention on Access to Information, Public Participation and Access to Justice in Environmental Matters (Aarhus Convention) regarding the communication submitted in September 2004. The latter document was presented by CRD/TI Armenia and partner organizations and referred to the non-compliance of the Government of Armenia with its obligations under the Aarhus Convention in relation to the development of the Dalma Orchards area in Yerevan.

The Compliance Committee acknowledged the non-compliance of the country with its obligations under the convention and provided recommendations to ensure its implementation, including concrete steps to be taken by 2008. The organization and partners held a series of actions, such as stakeholder discussion, press conference and dissemination of Compliance Committee conclusions, which resulted in the Prime Minister's assignment to create an inter-ministerial commission to develop a proposal for improvement of the country's performance.

## Համագործակցություն ՀԿ-ների հետ՝ խթանելու հանրային մասնակցությունը շրջակա միջավայրի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացում

2007թ. ՏՁԿ/ԹԻ-Հայաստանը շարունակել է իր անդամակցությունը հասարակական կազմակերպությունների էկոլոգիական դաշինքում և դրա խորհրդի կազմում: Կազմակերպությունը մասնակցել է Երևանում քաղաքաշինության և բնապահպանությանն առնչվող հարցերի շուրջ խորհրդարանական լսումների կազմակերպմանն ուղղված քարոզչությանը, աջակցել է համապատասխան օրենսդրության բարելավմանն ուղղված օրենսդրական առաջարկությունների մշակմանը, կազմակերպել է Երևանի կարգավիճակի վերաբերյալ հասարական կազմակերպությունների քննարկում և այլն:

2007թ. մայիսին ՏՁԿ/ԹԻ-Հայաստանի ներկայացուցիչը դադարեցրել է իր մասնակցությունը Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինության խորհրդում՝ հաշվի առնելով տվյալ կառույցի աննշան ազդեցությունը օրենքների կիրարկման վրա:

## Coalition-Building to Promote Public Participation in Environmental Decision-Making

In 2007, CRD/TI Armenia continued its membership in the Alliance of Environmental NGOs and its Council. The organization participated in the advocacy for assemblage of a parliamentary hearing on urban development and environment matters in Yerevan, assisted in the development of legal proposals for improvement of the related legislation, arranged an NGO hearing on the status of Yerevan city, etc.

In May 2007, the representative of CRD/TI Armenia relinquished participation in the Urban Development Council under the Mayor of Yerevan due to the low level of impact of this structure on law enforcement.

## Պրոֆեսիոնալ զարգացում՝ բարելավելու կազմակերպության կատարողականը

ՏՁԿ/ԹԻ-Հայաստանի աշխատակիցները զարգացրել են իրենց գիտելիքները և հմտությունները՝ մասնակցելով մոնիտորինգի և գնահատման, ռազմավարական պլանավորման, մարդկային ռեսուրսների կառավարման, շահերի պաշտպանության և լոբբինգի, պետական բյուջեի ձևավորման, հանրային գնումների մոնիտորինգի և այլ թեմաներով դասընթացների:

Կազմակերպության ներկայացուցիչը Մեծ Բրիտանիայի արտաքին և համագործակցության երկրների նախարարության կողմից ստացել է Չիվնինգի կրթաթոշակ՝ ուսանելու «Կառավարության հարաբերությունները հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ» ծրագրում:

## Professional Development to Enhance Organizational Performance

CRD/TI Armenia employees advanced their knowledge and skills through participation in training programs on monitoring and evaluation, strategic planning, human resource management, advocacy and lobbying, state budget development, public procurement monitoring, etc.

A member of the organization was also awarded a Chevening fellowship by the British Foreign and Commonwealth Office “Government Relationships with NGOs and Civil Society.”

**«Հայաստան 2006. պրակտիկա թե՞ խոստումներ. Հայաստանի մարտահրավերների և հնարավորությունների ընդհանուր պատկերը» թեմայով քննարկում**
Հայաստանի ամերիկյան համալսարան / Ֆրիդոմ Հաուս / Քաունթերփարթ Ինթերնեշնլ հայաստանյան ներկայացուցչություն
Երևան, Հայաստան
Մայիս 2006

**Միջազգային հակակոռուպցիոն կոնֆերանս և ԹԻ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային համաժողով**
ԹԻ քարտուղարություն / ԹԻ Խորվաթիա
Բրիունի, Խորվաթիա
Մայիս 2006

**Մոնիտորինգային հինգերորդ հանդիպում և խորհրդատվական խմբի յոթերորդ հանդիպում**
Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հակակոռուպցիոն ցանց
Փարիզ, Ֆրանսիա
Հունիս 2006

**«Եվրոպական ինտեգրացիայի դերը և հասարակական-քաղաքական բարեփոխումների չափանիշները Հայաստանում» սեմինար**
Երեւանի մամուլի ակումբ
Գորիս, Հայաստան
Հունիս 2006

**Ժողովրդավարության մոնիտորինգի և շահերի պաշտպանության ռազմավարություններ**
Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ
Երևան, Հայաստան
Հոկտեմբեր 2006

**12-րդ միջազգային հակակոռուպցիոն կոնֆերանս (ՄՀԿԿ)**
ԹԻ քարտուղարություն / ՄՀԿԿ խորհուրդ
Գվատեմալա Սիթի, Գվատեմալա
Նոյեմբեր 2006

**ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» կոնվենցիայի անդամ երկրների առաջին կոնֆերանս**
ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործության հարցերով գրասենյակ
Մեռյալ ծով, Հորդանան
Դեկտեմբեր 2006





**Discussion "Armenia 2006: Practice vs. Promise? An Overview of the Challenges and Opportunities Facing Armenia"**
American University of Armenia Career Development Office / Freedom House / Counterpart International
Yerevan, Armenia
May 2006

**Anti-Corruption International Conference and TI Europe and Central Asia Meeting**
TI Secretariat / TI Croatia
Brijuni, Croatia
May 2006

**OECD Anti-Corruption Network for Eastern Europe and Central Asia Fifth Monitoring Meeting and Seventh Advisory Group Meeting**
OECD Anti-Corruption Network
Paris, France
June 2006

**Seminar "The Role of European Integration and Criteria of Sociopolitical Reforms in Armenia"**
Yerevan Press Club
Goris, Armenia
June 2006

**Democracy Monitoring and Advocacy Strategies**
OSI Assistance Foundation - Armenia
Yerevan, Armenia
October 2006

**The 12th International Anti-Corruption Conference (IACC)**
TI Secretariat / IACC Council
Guatemala City, Guatemala
November 2006

**First Conference of the States Parties to the UN Convention**
UN Office of Drugs and Crime
Dead Sea, Jordan
December 2006

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

## Մուտքեր / Revenues

| Աղբյուր / Source | Գումար/Amount* |
|---|---|
| Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագիր /Քաունթերփարթ Ինթերնեշնլ հայաստանյան ներկայացուցչություն/ ԱՄՆ ՄԶԳ<br>Civic Advocacy Support Program /Counterpart International/ USAID | **21,074,292** |
| ՄԱԿ-ի զարգացման ծրագրի գրասենյակ Հայաստանում<br>UN Development Programme Office in Armenia | **17,620,454** |
| Օքսֆամ Մեծ Բրիտանիա հայաստանյան գրասենյակ, Օքսֆամ Նիդեռլանդներ (Նովիբ)<br>Oxfam Great Britain Armenian Branch Office, Oxfam Netherlands (Novib) | **13,861,963** |
| Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակ<br>The World Bank Office Yerevan | **11,371,000** |
| Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ<br>Open Society Institute Assistance Foundation – Armenia | **10,814,398** |
| Նվիրատվություն<br>Contributions | **151,200** |
| Ընդամենը<br>Total | **74,893,307** |






*Տվյալները նշված են Հայաստանի Հանրապետության դրամով:



# FINANCIAL DATA

## Ծախսեր / Expenditures

| Ծախսատեսակ / Category | Գումար / Amount* |
|---|---|
| Աշխատավարձեր<br>Salaries | 12,305,872 |
| Եկամտահարկ և սոցվճարներ<br>Income and social taxes | 12,185,365 |
| Ծրագրային ծախսեր<br>Program costs | 29,944,065 |
| Վարչական ծախսեր<br>Administrative costs | 10,928,954 |
| Սարքավորումներ և այլն<br>Equipment and other | 1,581,876 |
| Ընդամենը<br>Total | 66,946,132 |




*Amounts are stated in Drams of the Republic of Armenia.

## ԴՈՆՈՐՆԵՐ

Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագիր /Քաունթերփարթ Ինթերնեշնլ հայաստանյան ներկայացուցչություն/ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ

Օքսֆամ Մեծ Բրիտանիա հայաստանյան գրասենյակ

Օքսֆամ Նիդեռլանդներ (Նովիբ)

Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակ

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի գրասենյակ Հայաստանում

## DONORS

Civic Advocacy Support Program /Counterpart International/ US Agency for International Development

Open Society Institute Assistance Foundation – Armenia

Oxfam Great Britain Armenian Branch Office

Oxfam Netherlands (Novib)

The World Bank Office Yerevan

UN Development Programme Office in Armenia

## ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն

Հայկական բուսաբանական ընկերություն

«Հանուն մարդկային կայուն զարգացման» ասոցիացիա

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ

Համայնքների ֆինանսիստների միավորում

Հայաստանի հելսինկյան կոմիտե

Հետաքննող լրագրողներ

Երևանի մամուլի ակումբ

## PARTNERS

Armenian A.D. Sakharov Human Rights Protection Center

Armenian Botanical Society

Association for Sustainable Human Development

“Asparez" Journalists Club

Community Finance Officers' Association

Helsinki Committee of Armenia

Investigative Journalists

Yerevan Press Club

# ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

**Ամալյա Կոստանյան**, նախագահ
Հակակոռուպցիոն հարցերով խորհրդատու, ՏԶԿ/ԹԻ-Հայաստան

**Վարուժան Հոկտանյան**, փոխնախագահ
Հանրային քաղաքականության հարցերով փորձագետ, ՏԶԿ/ԹԻ-Հայաստան

**Լիլիթ Հակոբյան**
Միջազգային հարաբերությունների հարցերով փորձագետ, Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոն

**Վազգեն Կարապետյան**
Ծրագրի ավագ պատասխանատու, «Եվրասիա» հիմնադրամի Հարավային Կովկասում համագործակցության ծրագիր

**Արթուր Լալայան**
Իրացման և մարքեթինգի տնօրեն, «Սոլարէն» ՍՊԸ
Գլխավոր տնօրեն, «ԶոդՈւինդ» ՓԲԸ

# ԳՈՐԾԱԴԻՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

**Սոնա Այվազյան**
Գործադիր տնօրեն

**Ստելլա Աղաջանյան**
Գլխավոր հաշվապահ

**Ամալյա Կոստանյան**
Հակակոռուպցիոն հարցերով խորհրդատու

**Վարուժան Հոկտանյան**
Հանրային քաղաքականության հարցերով փորձագետ

**Վախթանգ Սիրադեղյան**
Լրատվամիջոցների հարցերով պատասխանատու / սոցիոլոգիական հարցումների համակարգող

**Նարինե Արզումանյան**
Ծրագրի համակարգող

**Իրինա Կարապետյան**
Ծրագրի օգնական

**Արմեն Բեգոյան**
Ծրագրի օգնական Շիրակի մարզում

**Սերուժ Աբրահամյան**
Պրակտիկանտ





# BOARD MEMBERS

**Amalia Kostanyan**, Chair
Anti-corruption Consultant, CRD/TI Armenia

**Varuzhan Hoktanyan**, Vice-Chair
Public Policy Expert, CRD/TI Armenia

**Lilit Hakobyan**
Researcher on International Affairs Issues, Center for European Law and Integration

**Vazgen Karapetyan**
Senior Program Coordinator, Eurasia Foundation South Caucasus Cooperation Program

**Artur Lalayan**
Marketing and Sales Manager, SolarEn LLC
General Manager, ZodWind CJSC

# EXECUTIVE AND PROJECT-BASED STAFF

**Sona Ayvazyan**
Executive Director

**Stella Aghajanyan**
Chief Accountant

**Amalia Kostanyan**
Anti-corruption Consultant

**Varuzhan Hoktanyan**
Public Policy Expert

**Vakhtang Siradeghyan**
Media Specialist / Survey Coordinator

**Narine Arzumanyan**
Project Coordinator

**Irina Karapetyan**
Project Assistant

**Armen Begoyan**
Project Assistant in Shirak Marz

**Serouj Aprahamian**
Intern

**Թրանսփարենսի Ինթերնեշնլը** համաշխարհային հասարակական կազմակերպություն է, որն առաջնորդող դեր ունի կոռուպցիայի դեմ պայքարում: Իր 90-ից ավել մասնաճյուղերի և Գերմանիայի Բեռլին քաղաքում տեղակայված միջազգային քարտուղարության միջոցով ԹԻ բարձրացնում է իրազեկությունը կոռուպցիայի վնասակար հետևանքների վերաբերյալ և աշխատում կառավարության, գործարար ոլորտի և քաղաքացիական հասարակության իր գործընկերների հետ` մշակելու արդյունավետ լծակներ այն հաղթահարելու ուղղությամբ:

**Transparency International** is the global civil society organization leading the fight against corruption. Through its more than 90 chapters worldwide and an international Secretariat in Berlin, Germany, TI raises awareness of the damaging effects of corruption and works with partners in government, business and civil society to develop effective measures to tackle it.

www.transparency.org

© Տարածաշրջանային զարգացման կենտրոն /
Թրանսփարենսի Ինթերնեշնլ - Հայաստան

ՀՀ, Երևան 0010
Նալբանդյան փ. 5, սեն. 38
Հեռախոս՝ (374 10) 585 578, 526 914
Ֆաքս՝ (374 10) 585 578
Էլ.հասցե՝ crd@transparency.am
Ինտերնետ կայք՝ www.transparency.am

© Center for Regional Development/
Transparency International Armenia

5, Nalbandyan Street, Rooms 35, 38
Yerevan 0010, Armenia
Phone: (374 10) 585 578, 526 914
Fax: (374 10) 585 578
Email: crd@transparency.am
Website: www.transparency.am